

սեռին պատկանողները պէտք է որ հաւասար թուով ներկայացուած լինէին Անդրկովկասի հայ, վրացի եւ թաթար բնակչութեան մէջ, ապա ուրեմն կը ստանանք հետեւեալ թիւերը (1838-ի համար) :

Վրացիներ՝ (առանց մինդրելների եւայլն) 182,431+182,431 = 364,863 շունչ :

Թաթարներ՝ 319,230+319,230 = 638,460 շունչ :

Հայեր՝ 147,303+147,303 = 294,60 շունչ :

Այս հաշուով՝ Անդրկովկասի հայ, վրացի եւ թաթար ազգաբնակչութեան ընդհանուր թիւը 1838-ին եղել է՝ 1,297,929 :

Եթէ այս վերջին թիւը հանենք նոյն Koepen-ի կողմից Անդրկովկասի ողջ ազգաբնակչութեանը յատկացուած վերոյիշեալ 1,358,994 թուից, կը մնայ ուրեմն՝ 61,066 :

Այս վերջինի մէջ են մտնում ահա՝ վրացական մասը ցեղերը — մինդրելներ, սվաններ եւայլն — որոնք վրացիներին յատկացուած վերոյիշեալ (364,863) թուի մէջ չեն մտած : Հաւանորէն նոյն այդ թուի մէջ են մտած նաեւ Վրաստանի մէջ ապրող միւս ցեղերը — օսեր, ռուսներ եւայլն : Այնպէս որ հաւանական չենք համարում ենթադրել, որ բացի այդ մասը ժողովուրդներէն՝ 61,066-ի մէջ հաշուելու է նաեւ Անդրկովկասի առհասարակ բոլոր մասը ժողովուրդներին, քանի որ դրանք ամէնը միասին այն ժամանակ էլ, անտարակոյս, աւելի էին թուով, քան միայն՝ 61,066 : Հաւանական է, որ 1838-ի վիճակագրութեան մէջ «քաքար» անուան տակ առնուած լինին առհասարակ Անդրկովկասի բոլոր մահմեդական ցեղերը : Մինչեւ վերջն էլ ցարական վիճակագրութիւնը

մէկ սիւնակի տակ էր առնում Կովկասի բոլոր մահմեդականներին : Իրականին մէջ, ուրեմն, բուն քաքար ցեղը շատ աւելի պակաս եղած պիտի լինի 1838-ին, քան որ վիճակագրութեան առաջ բերած 638,460 թիւն է ցոյց տալիս :

Յայտնի է արդէն, որ Խորհրդային վերջին վիճակագրութեամբ Անդրկովկասի թաթար (թիւրք) ազգաբնակչութեան համար շատ աւելի պակաս թիւ է ցոյց տրուած, քան որ ընդունուած է եղել կարծել՝ հիմնուելով ցարական մարդահամարների վրայ, որոնք առհասարակ բոլոր մահմեդականներին որպէս մէկ «ժողովուրդ» (մահմեդական, «մուսուլման») էին վիճակագրում :

Յամենայն դէպս, Անդրկովկասի ազգաբնակչութեան կլար թիւը 1838-ին ընդունելու է 1,400,000 : Հայերի, վրացիների (մինդրելներ եւ այլն՝ մէջը հաշուելով) եւ թաթարների (աւելի շուտ՝ բոլոր մահմեդականների) համար էլ ուրեմն կարող ենք ընդունել հետեւեալ կլոր թիւերը —

<b>Հայեր</b>	300,000
Վրացիներ, վրացկ. բոլոր ցեղեր	400,000
Թաթարներ եւ մահմեդականներ	650,000
Ռուսներ, օսեր եւ քրիստոն.	
ուրիշ մանր ժողովուրդներ	50,000

Գումար՝ 1,400,000

Թէեւ նիւթի հետ կապ չունի, բայց եւ այնպէս պարզ հետաքրքրութեան եւ բարդատուութեան համար առաջ բերենք նաեւ յետագայ մի քանի թուականների տուեալները անդրկովկասեան երեք ղլխաւոր ժողովուրդների քանակի մասին :

Ահա բաղդատական տուեալները.—

Ժողովուրդներ	1838 թ.*	1886 թ.	1897 թ.		1922
Հայեր	294,600	939,131	1,086,980	1,685,936	1,489,175
Վրացիներ	364,863	1,201,266	1,342,446	1,741,717	1,536,751
Մահմեդականներ	638,460	2,199,285	2,511,248	3,089,237	1,334,984
		Միայն թաթար՝ 1,139,659)	(Միայն թաթարներ) ,472,234)		(Միայն թաթարներ)

\*) 1838-ի թուերը ուրեմն Koepen-ից են ծագում : 1886-ի եւ 1914-ի թուերը Կովկասի ռուս վարչութեան պաշտօնական թուերն

են, 1897-ինը՝ համառուսական վիճակագրութեան, իսկ 1922-ի թուերը՝ Անդրկ. Խորհրդային կառավարութեան վիճակագր. տուեալները :